ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի հունիսի 30-ի N 142-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 2/2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի մայիսի 10-ի «Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2/2 որոշման Հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.
   1) 8-րդ կետի «Հաշվեքննիչ պալատի նվազագույնը երեք անդամի նախաձեռնությամբ» բառերից հետո լրացնել «՝ Հաշվեքննիչ պալատի անդամի կողմից բոլոր անդամներին ուղարկված գրավոր առաջարկին, Հաշվեքննիչ պալատի առնվազն երկու անդամի գրավոր համաձայնության հիմքով:» բառերով:
   2) 9-րդ կետի «Անհրաժեշտությունից ելնելով՝ Հաշվեքննիչ պալատի արտագնա նիստերը կարող են անցկացվել հեռավար կարգով» բառերը փոխարինել «Հաշվեքննիչ պալատի նիստերը՝ նիստը հրավիրողի կամ արտահերթ նիստ նախաձեռնողի գրավոր առաջարկով, կարող են անցկացվել հեռավար կամ գրավոր ընթացակարգով» բառերով: Կետը լրացնել հետևյալ նախադասություններով. «Ընդ որում, գրավոր ընթացակարգով անցկացման դեպքում, նիստի անցկացման օրը՝ մինչև ժամը 11.00-ն Հաշվեքննիչ պալատի անդամները գրավոր քվեարկում են նիստի օրակարգում ներառված յուրաքանչյուր հարցի համար: Քվեարկության մասին գրությունը պետք է պարունակի օրակարգում ընդգրված կետի անվանումը և հարցին կողմ կամ դեմ քվեարկելու որոշումը: Սահմանված ժամկետի ընթացքում

օրակարգի հարցի վերաբերյալ չքվեարկելը, համարվում է «Կողմ» քվեարկություն, եթե Հաշվեքննիչ պալատի անդամը օրենսդրությամբ սահմանված կարգով հարգելի բացակայության մասին, նախապես չի տեղեկացրել նիստը նախագահողին:»

3) 16-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Նիստին Հաշվեքննիչ պալատի անդամի բացակայությունը հարգելի է համարվում՝ նիստը նախագահողին նախապես տեղեկացնելու և օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դեպքում: Գործուղման մեկնող Հաշվեքննիչ պալատի անդամը կարող է հարցի քվեարկության վերաբերյալ իր որոշման մասին նախապես գրավոր տեղեկացնել Հաշվեքննիչ պալատի նախագահին:»

4) 22-րդ կետը «Հաշվեքննիչ պալատի յուրաքանչյուր անդամ քվեարկում է անձամբ, ունի մեկ ձայն և քվեարկում է կողմ կամ դեմ:» բառերից հետո լրացնել «Սույն կանոնակարգի 16-կետով սահմանված կարգով քվեարկությանը մասնակցող Հաշվեքննիչ պալատի գործուղված անդամի որոշումը հրապարակվում է Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից և հաշվարկվում է քվեարկության ընդհանուր ձայների քանակում: Գործուղված Հաշվեքննիչ պալատի անդամի գրությունը կցվում է արձանագրությանը:» բառերով:

5) 5-րդ գլուխի վերնագրում «ԵՎ» տառը փոխարինել «,» կետադրական նշանով, «ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ» բառերից հետո լրացնել «ԵՎ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ» բառերը և 5-րդ գլխի բովանդակությունում լրացնել «ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ» թիվ 6 ձևանմուշը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Ձևանմուշ 6

ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

1. Հաշվեքննիչ պալատի որոշման նախագծի անվանումը՝
«....» Հաշվեքննիչ պալատի որոշման նախագիծ

2. Օրակարգում հարցի համարը՝ ....

3. Քվեարկության դնելու ամսաթիվը՝ .../..../20...թ.

4. Քվեարկողի պաշտոնը, անունը, ազգանունը՝
Հաշվեքննիչ պալատի անդամ ...

3. Քվեարկությունը (ստորագրություն)՝

Կողմ եմ	Դեմ եմ